ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

2017 թ. հունիսի 30

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Ա.Ասատրյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ՝

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Լալա Տեր-Ղազարյան	«Պանորամա Էյեմ» ՍՊԸ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ» ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Ելենա Հարությունյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Շողիկ Սողոմոնյան	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Գոռ Աբրահամյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Աշոտ Քոչարյան	«Սոս մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արայիկ Հայրապետյան	Ֆիզիկական անձ
Աննա Մնացականյան	Ֆիզիկական անձ
Սյուզաննա Բաղդասարյան	Ֆիզիկական անձ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Ելք./ 30942-17
27 07 17

Հրավիրված էին՝

Արայիկ Պետրոսյան	Նախարարի առաջին տեղակալ
Սոնա Հարությունյան	Նախարարի տեղակալ
Աշոտ Մարգարյան	Նախարարի տեղակալ
Դավիթ Հակոբյան	Նախարարի խորհրդական
Աննա Սաֆարյան	Նախարարի օգնական
Անահիտ Գալստյան	Նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետ
Աստղիկ Մինասյան	Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ
Արթուր Կեսոյան	Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Ժորա Սարգսյան	Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Վանիկ Բաբաջանյան	Նախարարության աշխատակազմի ժողովրագրության բաժնի պետ
Լենա Հայրապետյան	Նախարարության աշխատակազմի երեխաների հիմնահարցերի բաժնի պետ
Արամ Պետրոսյան	Նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ
Անահիտ Գևորգյան	Նախարարության աշխատակազմի տարեցների հիմնահարցերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ
Անուշ Դանիելյան	Նախարարի մամուլի քարտուղար
Սիրանուշ Զաքարյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ԱՍՀ նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության երկամյա ծրագրի հաստատման մասին
   (ՀՀ ԱՍՀ նախարար Ա. Ասատրյան)
2. Երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու առկա իրավիճակը
   (նախարարի տեղակալ Ա. Մարգարյան)
3. Տարեցների խնամքի տուն- ինտերնատներում առկա խնդիրները, իրականացված աշխատանքներն ու սպասվելիք բարեփոխումները
   (նախարարի տեղակալ Ս. Հարությունյան)
4. Այլ հարցեր

Նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չներկայացվեցին: Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

Մինչ օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին, հատկապես նոր ընդգրկված անդամներին՝ նշելով, որ շատ է կարևորում ձևավորված հարթակի շրջանակներում յուրաքանչյուր անդամի առավել ակտիվ մասնակցությունն ոլորտի խնդիրների բարձրացման և դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին: Նա նաև պատրաստակամություն հայտնեց հանդիպելու խորհրդի յուրաքանչյուր անդամի հետ, խորհրդի նիստերից դուրս՝ եթե այդպիսի ցանկություն կլինի, քննարկել և համատեղ արդյունավետ լուծում գտնել, նրա կողմից բարձրացված ոլորտում առկա խնդիրներին: Այնուհետև հանդիպումներն ավելի հաճախակի դարձնելու նպատակով Նախագահը առաջարկեց որոշում կայացնել նիստերը եռամսյակը մեկ գումարելու մասին, օրինակ՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա վերջին ուրբաթ օրը՝ միաժամանակ ընդգծելով, որ դրանով չի սահմանափակվում արտահերթ նիստեր հրավիրելու նախաձեռնությունը: Այս առաջարկը միաձայն ընդունվեց Խորհրդի անդամների կողմից:

Թամարա Աբրահամյանն առաջարկեց քննարկել խորհրդի տարեկան հաշվետվության ներկայացման հարցը՝ հստակեցնելով հաշվետվության մշակման և իրականացման ձևաչափն ու ընթացակարգը:

Նախարարն առաջարկեց այն ընդգրկել այլ հարցերի մեջ և վերջինիս շրջանակներում քննարկման առարկա դարձնել:

1. **ՀՀ ԱՍՀ նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության երկամյա ծրագրի հաստատման մասին**

Անցնելով օրակարգի առաջին հարցին՝ նախագահն անդրադարձավ ծրագրով նախատեսված միջոցառումներին, մասնավորապես՝

1. Սոցիալական պաշպանության համապատասխան ոլորտներում ընդունվելիք իրավական ակտերի նախագծերի ներկայացում և քննարկում,
2. Սոցիալական պաշպանության տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքի ներկայացում և քննարկում,
3. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և առանձնահատուկ դեպքերի հրապարակայնության սահմանափակումների վերաբերյալ կանոնակարգի սահմանում,
4. Խորհրդի կազմում վերջինիս անդամների առաջարկությամբ և ըստ անհրաժեշտության ոլորտային աշխատանքային խմբերի ձևավորում,
5. Խորհրդի անդամների կողմից իրենց գործունեության, իրականացվող ծրագրերի, կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ հաղորդումների ներկայացում խորհրդի նիստերին:

Նախագահի կողմից կարևորվեցին և հիմնավորվեցին ծրագրում ներառված յուրաքանչյուր միջոցառում:

Առաջին հարցի վերաբերյալ Խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց կարծիքներն ու առաջարկությունները:

Նախարարի տեղակալ տիկին Հարությունյանն առաջարկեց հասարակական խորհրդի գործունեության երկամյա ծրագրում նախատեսել սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտակման և գնահատման արդյունքների ամփոփ հաշվետվության ներկայացում՝ ըստ անհրաժեշտության:

Խորհրդի ծրագրի 3-րդ միջոցառմանը՝ սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և առանձնահատուկ դեպքերի հրապարակայնության սահմանափակումների վերաբերյալ կանոնակարգի սահմանմանն անդրադառնալով, քննարկման արդյունքում որոշվեց հանել վերոնշյալ կետում ներառված «սահմանափակումների» բառը: Այս առընչությամբ խմբագրական փոփոխության առաջարկ էր ներկայացրել նաև «Արազա» ԲՀԿ-ն:

Արայիկ Հայրապետյանը նշեց, որ առանձնապես կարևորում է նման կանոնակարգի սահմանումը, բայց խորհուրդը նման իրավասություն չունի, այն իրավաստեղծ մարմին չէ և չունի իրավական ակտեր ընդունելու իրավասություն, այլ կարող է ընդունել միայն խորհրդատվական որոշումներ:

Խորհրդի ծրագրի 4-րդ միջոցառման մեջ ներառված աշխատանքային խմբերին անդրադառնալով՝ Թամարա Աբրահամյանն առաջարկեց ստեղծել ոլորտային հետաքրքրվածություններով օժտված կայուն և ժամանակավոր աշխատանքային խմբեր:

Նախագահը անդրադառնալով ներկայացված առաջարկներին՝ Ա. Հայրապետյանի առաջարկի վերաբերյալ նշեց, որ նման կանոնակարգ պատրաստ լինելուց և քննարկվելուց հետո այն կարող է հաստատվել Նարարարի կողմից և ստանալ իրավական ակտի ուժ:

Ինչ վերաբերվում է Ս. Հարությունյանի առաջարկին, ապա այն ընդունվեց Խորհրդի կողմից:

Նախագահը նշեց, որ երկամյա ծրագրի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացվել են միայն Թ. Աբրահամյանի կողմից, որոնք խմբագրական բնույթի են և հիմնականում ընդունելի առաջարկներ են, բացի մեկից՝ որը վերաբերում է մշտական ոլորտային աշխատանքային խմբերի ձևավորմանը:

Ըստ անհրաժեշտության Խորհրդի անդամների առաջարկությամբ ժամանակավոր խմբերի ստեղծումն ավելի գործնական է: Այս առաջարկը դրվեց քվեարկության և Խորհրդի անդամները նշվածի վերաբերյալ տվեցին իրենց համաձայնությունը:

Նաև որոշվեց, որ այս առաջարկները հաշվի առնելով երկամյա ծրագրի նախագիծը կլրամշակվի և այս նիստի արձանագրության նախագծի հետ կուղարկվի Խորհրդի անդամներին: 5-օրյա ժամկետում առաջարկներ չստանալու դեպքում կհամարվի, որ խորհրդի անդամները համաձայն են ներկայացված փաստաթղթերի հետ:

Օրակարգի առաջին հարցի շրջանակներում ներկայացված առաջարկություններից հետո տեղի ունեցավ քննարկում: Ներկայացված առաջարկություններով և լրացումներով հանդերձ Նախագահը ՀՀ ԱՍՀ նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության երկամյա ծրագրի նախագիծը դրեց քվեարկության, որն էլ ընդունվեց Խորհրդի անդամների կողմից:

Այնուհետև Նահագահը համառոտ անդրադառնալով օրակարգում ներառված երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ հարցին՝ ևս մեկ անգամ կարևորեց նշված գործընթացները հստակ, թափանցիկ, ամբողջական իրականացնելու ուղղությամբ Խորհրդի անդամների անմիջական և առարկայական մոտեցումները, խորհուրդները, առաջարկություններն ու առարկությունները:

Նախագահը միաժամանակ ընդգծեց, որ ապաինստիտուցիոնալացումը և երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը չպետք է հնչի միայն որպես կարգախոս, այն պետք է ունենա առարկայական մոտեցում, համապատասխան ենթակառուցվածքներ, զարգացած այլընտանքային ծառայություններ ու ընտանիքների աջակցության փաթեթներ:

Այնուհետև նախարարը տեղեկացրեց, որ ինքը պետք է մասնակցի ՀՀ կառավարության արտագնա նիստին և Խորհրդի նիստի հետագա ընթացքը վարելու համար առաջարկեց Նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի թեկնածությունը: Նախարարի առաջարկը Խորհրդի անդամների կողմից միաձայն ընդունվեց:

Պարոն Ա. Պետրոսյանը անցնելով իր պարտականություններին՝ օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ձայն տվեց նախարարի տեղակալ Ա. Մարգարյանին:

2. Երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու առկա իրավիճակը

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ նախարարի տեղակալ Աշոտ Մարգարյանը, մանրամասն ներկայացնելով երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու առկա իրավիճակը, նշեց, որ երեխաների պաշտպանության 2017-2021թթ. ռազմավարություն մշակելիս նախարարությունն աշխատել է բոլոր շահագրգիռ կողմերի հետ և բոլոր կարծիքներն ու առաջարկները հնարավորինս ընդգրկվել են ռազմավարության մեջ: Միաժամանակ ընդգծեց, որ վերոնշյալ ռազմավարությունն իրենից ներկայացնում է նախկին ռազմավարությունների բազային բոլոր դրույթները, սակայն հիմնական տարբերությունը կայանում է նրանում,որ վերջինիս մեջ ամրագրված տեսլականը շրջադարձային փոփոխություն է բերելու երեխաների պաշտպանության ոլորտում, մասնավորապես՝ որդեգրվել է մարզ առ մարզ մոտեցումը: Ա. Մարգարյանը տեղեկացրեց, որ այս պահին աշխատանքները սկսել են Լոռվա մարզից: Նախատեսվող բոլոր աշխատանքները փոխկապակցված են լինելու, մասնավորապես՝ Լոռվա մարզի տրանսֆորմացիոն պլանն արդեն իսկ համաձայնեցվել է կրթության ոլորտում ՀՀ կրթության և գիտության նարարարության կողմից Լոռվա մարզում իրականացվող քաղաքականության հետ: Ամբողջական առումով հիմնական դրույթները տեղ են գտել տրանսֆորմացիոն պլանում, ըստ այդմ՝ թվով հինգ մարզերում՝ Այունիքում, Շիրակում, Լոռիում, Տավուշում և Կոտայքում ներկայումս գործող գիշերօթիկ հաստատությունները պետք է վերակազմավորվեն

ընտանիքի և երեխայի աջակցության կենտրոններ հիմնադրամների (այսուհետ՝ Հիմնադրամ), այսինքն՝ ներկայումս իրավական կարգավիճակ ունեցող ՊՈԱԿ-ները վերանվանվելու են Հիմնադրամների, որը հնարավորություն կընձեռի ավելի թափանցիկ գործունեության և տեղում ինքնուրույնության: Միաժամանակ հավելեց, որ Հիմնադրամն ունենալու է հոգաբարձուների խորհուրդ, նրանում հավասարապես ընդգրկված են լինելու բոլոր շահագրգիռ խմբերը՝ համայնքի ղեկավարներ, մարզպետարանի, ՀՀ ոստիկանության, դաշտում գործառող հասարակական կազմակերպությունների ակտիվ ներկայացուցիչներ, ԱՍՀ նախարարության ներկայացուցիչներ: Հոգաբարձուների խորհրդին եռամսյա կտրվածքով Հիմնադրամի տնօրենը հաշվետվու է լինելու իր գործունեության համար, այսինքն՝ դրանով հնարավոր կլինի խուսափել համակարգում գործող ռիսկային որոշակի խնդիրներից:

Ա. Մարգարյանը ընդգծեց, որ ռազմավարության հենքային դրույթները հետևյալն են.

- Ապահովվելու է 50% երեխաների վերադարձ իրենց կենսաբանական ընտանիքներ,
- Տեղի է ունենալու ընտանիքի ամրապնդման և կանխարգելման ծրագրերի պատվիրակման մեծացում, այսինքն՝ նախարարությունը ձգտելու է ծառայություն մատուցող կառույցից վերածվելու ծառայություններ պատվիրակող կառույցի:

Հետևաբար, այս աշխատանքների իրականացման առումով կարևորվում է ՀԿ-ների, տարբեր հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու դերակատարումն այս գործընթացի կազմակերպման հարցում: Ա. Մարգարյանը հավաստիացրեց, որ առաջիկայում իրականացվող բարեփոխումներն էլ ավելի շոշափելի ու տեսանելի կլինեն:

Բացի կենսաբանական ընտանիք երեխաների վերադարձից, խնամատար և խնամակալ ընտանիքներում խնամքի կազմակերպման քաղաքականության իրականացումից, Ա. Մարգարյանը նշեց, որ շատ դեպքերում հնարավոր չէ երեխաների վերադարձ կոնկրետ ընտանիքներ: Դա պայմանավորված է թե՝ հոգեհուզական կապի բացակայության և թե՝ այդ ընտանիքների սոցիալ-բարոյական կարգավիճակով, այսինքն՝ ոչ բոլոր դեպքերում է ընտանիքը երեխայից հրաժարվել սոցիալական խնդրիների պատճառով, հետևաբար այդ երեխաների խնամքը հնարավորիս ընտանիքահեն կամ ընտանեկան տիպին մոտ կազմակերպելու նպատակով նախատեսվում է ստեղծել փոքր ընտանեկան տիպի տներ Լոռվա, Շիրակի մարզերում:

Ա. Մարգարյանը կարևորեց կորպորատիվ սոցիալական մակարդակի բարձրացումը, որը հնարավորություն կտա ընդլայնելու խնամատար ընտանիքների մշակույթի աշխարհագրությունը, ինչպես նաև կոնտիգենը, այսինքն՝ խնամատար ընտանիքները պատրաստ կլինեն դառնալու ոչ միայն սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքներ, որոնք դրա համար վարձատրվում են, այլև հասարակության ավելի ապահովված ընտանիքները:

Մարգարյանը իրազեկեց, որ վերոնշյալ գործընթացներն իրականացվելու են ներկայումս գործող հաստատությունների պահպանման ծախսերի՝ հաստիքացուցակների կրճատման հաշվին՝ ապահովելով այլընտրանքային ծառայությունների մակարդակի բարձրացումը և նոր տիպի ծառայությունների ներդրումը:

Միաժամանակ նշեց, որ զուգահեռաբար ուսումնասիրում են վերոնշյալ բարեփոխումների փուլով անցած Վրաստանի Հանրապետության փորձը:

Այնուհետև անդրադարձավ առաջիկայում նախատեսվող Սոցիալական շտապօգնություն ծրագրի գործարկմանը, որը բաղկացած է լինելու երկու բաղադրիչից՝

- Սննդի պահուստ
- Իրեղենի պահուստ

Ստեղծվող ծրագրի առաջին իսկ մատակարարումը լինելու է ներկայումս գործող հաստատությունների գույքի օտարումը, որի միջոցով հնարավորություն կստեղծվի հնարավոր աջակցություն ցուցաբերել սոցիալական ծանր կացության մեջ գտնվող ընտանիքներին:

Ա. Մարգարյանն ընդգծեց, որ սոցիալական դեպք վարողները շատ դեպքերում ընտանիքի կարիքները գնահատելու ժամանակ օժտված չեն ընտանիքի հարցերը լուծելու հնարավորությամբ, որովհետև չունեն բավականաչափ ռեսուրսներ: Եվ այս առումով անհրաժեշտ է ներդնելով պատրաստի ռեսուրսներ ձևավորել գիտակցության նոր մակարդակ՝ դաշտում գործող բոլոր կազմակերպություններին բերելով մեկ հարթակ՝ միաժամանակ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:

Ամփոփելով իր խոսքը, Ա. Մարգարյանը նշեց, որ այս ծրագրի հիմնական գաղափարը, նպատակը համայնքահեն, ընտանիքահեն ծառայությունների ստեղծումն է:

Երկրորդ հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին կարծիքներ և առաջարկություններ:

Արթուր Սարգսյանը նշեց, որ երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներն անվանում է բաց լուսամուտի քաղաքականություն:

Սուսաննա Թադևոսյանը կարևորեց սոցիալական աշխատողների մասնագիտական բարձր որակավորման և ինստիտուտի կատարելագործման խնդիրը և առաջարկեց այն դարձնել օրակարգային հարց:

Թ. Աբրահամյանը նշեց, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների (Պետական համալսարան, Մանկավարժական համալսարան) սոցիալական աշխատողների մասնագիտությամբ ուսանողներին պետք է ընձեռվի պրակտիկայի անցկացման և հետագայում շրջանավարտներին համապատասխան հաստատություններում աշխատանքի տեղավորելու ինստիտուցիոնալ հնարավորություններ:

Ա. Մարգարյանը հավելեց, որ Զբաղվածության պետական գործակալությունն այդ նպատակով ստեղծել է նոր ծրագիր՝ որը հնարավորություն է ընձեռում նորավարտների մուտքը պետական համակարգ՝ սոցիալական, պետական, քաղաքական ոլորտներ:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նիստը վարողի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել պրն. Ա. Մարգարյանի կողմից ներկայացված հաղորդումը և ըստ անհրաժեշտության անդրադառնալ ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքին: Պարոն Ա. Պետրոսյանը հավելեց նաև, որ այս բարեփոխումները կարևոր են, բայց և ամենադժվար իրականացվող բարեփոխումներից են: Միաժամանակ նշեց, որ այդ հարցը պահանջում է ողջ հանրության ուժերի մոբիլիզացիա, հետևաբար պետք է ամբողջ ռեսուրսները մոբիլիզացնել, հանդես բերել հետևողականություն, աշխատանքները կազմակերպել ճիշտ, արդյունավետ և թափանցիկ:

Այնուհետև նա խոսքը փոխանցեց նախարարի տեղակալ Ս. Հարությունյանին:

3. Տարեցների խնամքի տուն- ինտերնատներում առկա խնդիրները, իրականացված աշխատանքներն ու սպասվելիք բարեփոխումները

Անցնելով օրակարգի 3-րդ հարցին՝ նախարարի տեղակալ Սոնա Հարությունյանը ներկայացրեց տարեցների խնամքի տուն-ինտերնատներում առկա խնդրիրները, իրականացված աշխատանքներն ու սպասվելիք բարեխոխումները: Նա նշեց, որ հավանության է արժանացել «Ծերացման հետևանքների հաղթահարման և ռազմավարության իրականացման 2017-2021 թթ. միջոցառումների ծրագիրը», որի նպատակն է ստեղծել բարենպաստ և առողջ միջավայր տարեց մարդկանց համար՝ ապահովելով նրանց արժանապատիվ ծերացման գործընթացը:

Ս. Հարությունյանը հավելեց, որ ՀՀ 2018-2020թթ. ՄԺԾ ծրագրի հայտի նախագծում ընդգրկվել է երկու նոր նախաձեռնություն, որպես այլընտրանքային ծառայությունների մոդելներ՝ «Սպիտակի խնամքի տան» և «Ջերմիկ անկյուն» խմբային տան գործունեության շարունակությունն ապահովելու նպատակով՝ պետական աջակցության տրամադրում, որը նաև պատվիրակված ծառայությունների իրականացման օրինակ է:

Ինչպես նաև մշակվել են ՀՀ ԱՍՀ նախարարի 2017թ. մարտի 17-ի 44-Ա/1 հրամանով հաստատված «Խնամքի կարիք ունեցող տարեց և հաշմանդամություն ունեցող, 18 տարին լրացած, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ ըստ նրանց ֆիզիկական (մարմնական) և հոգեկան (մտավոր) առողջության վիճակի, ինքնասպասարկման ունակությունների, սոցիալական հմտությունների և կարողությունների գնահատման խմբերի սահմանման մեթոդաբանությունը»: Շատ կարևոր է, որ տուն-ինտերնատներում բնակվող տարեցները գնահատվեն՝ ըստ իրենց տարատեսակ կարողությունների, նրանք խմբավորվեն և ծառայությունները մատուցվեն՝ ըստ նպատակային յուրաքանչյուր խմբի համար:

Միաժամանակ հավելեց, որ վերանայվում է խնամքի համար անհրաժեշտ չափորոշիչները՝ համաձայն մշակված մեթոդաբանությամբ գնահատված խմբերի կարիքների:

Այնուհետև նշեց, որ բազմաթիվ քննարկումների արդյունքում ՀՀ ԱՍՀ նախարարի 06.06.2017թ. 83-Ա/1 և 08.06.2017թ. 84-Ա/1 հրամաններով կանոնակարգվել, հստակեցվել են տուն-ինտերնատներ անձանց ընդունելության, հաշվառման և դուրսգրման, ինչպես նաև խնամվողների սննդի կազմակերպման գործընթացները: Այսինքն՝ վերոնշյալ հրամաններով հաստատված կարգերի ու չափորոշիչների կիրարկումը էականորեն նվազեցնելու է կոռուպցիոն ռիսկերը, բարձրացնելու է սննդի ապահովման պայմանները և տնտեսվելու են ֆինանսական միջոցները:

Ս. Հարությունյանը հավելեց, որ Նախարարությունում ներդրվում է մշտադիտակման և գնահատման համակարգ՝ ծրագրերի, մատուցվող ծառայությունների և այդ համակարգի ներդրման շրջանակներում առաջին փորձնական գնահատված ծրագրերից մեկը տուն-ինտերնատներում տարեցների խնամքի կազմակերպման ծառայությունների գնահատումն է: Ինչպես նաև ներկայումս իրականացվում է այդ ամբողջ գործիքակազմի լրամշակումը՝ ըստ

նոր հաստատված մեթոդաբանության և բարեփոխումների նոր գաղափարները հաշվի առնելու համատեքստում:

Ս. Հարությունյանը ներկայացրեց տուն-ինտերնատների կողմից ներկայացված առկա խնդիրները, մասնավորապես՝

- Կազմակեպության խնամյալների կենսապայմանների բարելավում,
- Ձեռնակատիրական գործունեության իրականացում,
- Գրադարանը նոր գրքերով համալրում,
- Խնամողների համար նախատեսված խաղասենյակում համակարգչային՝ skayp ծրագրի ներդնում,
- Տարեցների համար հարազատների հետ մատչելի փոխհարաբերություններ ունենալու հնարավորությունների ստեղծում,
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների կառուցում,
- Ջեռուցման ողջ համակարգի փոփոխություն,
- Խոհանոցի տանիքի հիմնանորոգում
- Բարեգործական հասարարական կազմակերպությունների հետ համագործակցելով ներդրումային ծրագրի իրականացում:

Ս. Հարությունյանն այնուհետև առանձնացրեց Նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունների, մշտադիտակման և գնահատման արդյունքներում արձանագրված խնդիրները, մասնավորապես՝

- Պահեստներում սննդի կամ ապրանքանյութական արժեքների ավելցուկ կամ պակասորդ,
- Պահեստներում ժամկետանց սննդի առկայություն,
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները լիարժեք չկատարելը, մասնավորապես՝ գնվող սննդի և այլ ապրանքների անհամապատասխանությունը գնման տեխնիկական բնութագրին,
- Որոշ դեպքերում «չարաշահումներ» կապված շահառուների թաղման նպաստների տրամադրման հետ,
- Աշխատող կադրերի կրթական, մասնագիտական հմտությունների խնդիրներ և նրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին,
- Սենյակների անբավարար մակերեսն՝ ըստ սահմանված չափորոշիչի,
- Ճաշարանի անբավարար մակերեսն, որն առաջացնում է հերթեր և սնվելու հետ կապված խնդիրներ,
- Լողասենյակի անբավարար վիճակը,
- Համապատասխան քանակի և որակի սպասքի բացակայությունը,
- Շահառուների կարճաժամկետ բացակայության կամ ժամկետից շուտ վերադառնալու դեպքում պահեստից սննդի բացթողման և ճաշացանկի կազման խնդիրը, որն արդեն իսկ կանոնակարգվել է Նախարարի 2017թ. հունիսի 8-ի N84-Ա/1 հրամանով,
- Շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքների անբավարար մակարդակը,

- ՊՈԱԿ-ի կառավարման հետ կապված խնդիրները,
- Շահառուների չմասնակցելը կառավարմանը
- Շահառուների ամբողջական առողջական ծառայությունների մատուցման, հատկապես՝ ատամնաբուժական ծառությունների մատուցման հնարավորությունների ստեղծումը:

Ս. Հարությունյանը հավելեց, որ ՊՈԱԿ-ները առաջ են քաշել համակարգիչների բացակայության խնդիրը: Նշեց, որ Նախարարության ենթաոլորտներից ամենաթույլ ենթաոլորտն է, որտեղ էլեկտրոնային տեղեկատվության ստացման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Միաժամանակ նշեց, որ ըստ մեթոդաբանության գնահատվում է նաև շահառուների կարծիքի ուսումնասիրությունը, որը տուն-ինտերնատներում բնակվող շահառուների և աշխատակիցների կարիքի գնահատումն է:

Այնուհետև Ս. Հարությունյանը անդրադարձավ առաջիկայում սպասվելիք բարեփոխումներին, մասնավորապես՝

- Նախատեսվում է ՀՀ վարչապետի որոշմամբ ծերացման հիմնահարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում,
- Նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում տարեցներին մատուցվող նոր, ժամանակակից մոտեցումների վրա հիմնված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմանն ուղղված՝ խնամքի այլընտանքային ծառայությունների մոդելների (ծրագրերի) մշակում և փորձնական ծրագրերի իրականացում, գնահատում:
- Նախատեսվում է տարեցների խնամքի գործող պետական և ոչ պետական հաստատություններում ծառայությունների տեսականին ու որակը բարելավելու նպատակով իրավական հիմքերի ապահովում,
- Նախատեսվում է խնամքի բոլոր հաստատություններում և բնակչության շրջանում խնամվողների ամբողջական և համալիր հետազոտության իրականացում:
- Կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, որպես տուն-ինտերնատին այլընտրանք, տարեցների խմանքը խնամատար ընտանիքներում կազմակերպելու համար համապատասխան իրավական հիմքերի ստեղծում, ծրագրի մշակում և իրականացում:
- Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի որոշ ծրագրեր և ծառայություններ մրցակցային սկզբունքով պատվիրակման միջոցով իրականացնելու համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովում և խնամքի ծառայությունների պատվիրակում մրցակցային սկզբունքով,
- Տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններում, տնային պայմաններում, ինչպես նաև ցերեկային կենտրոններում խնամքի ծառայությունների՝ վճարովի և համավճարի սկզբունքով տրամադրման մեխանիզմների սահմանումը, ներդնումը,
- Տուն-ինտերնատներում ՄԻՊ-ի կողմից նշված բացթողումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների պլան-ժամանակացույցի կազմում,
- Նախատեսվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների համար խնամքի մասնագիտացված տան ստեղծում, իրավական հիմքերի ապահովում,

- Կարևորվում է տարեցներին խնամքի ծառայություններ մատուցող մասնագետների պատրաստումը և շարունակական վերապատաստումների իրականացումը,
- Խնամքի չափորոշիչների մշակում,
- Խնամքի ծառայություններից անցում դեպի առողջ և ակտիվ կենսակերպ վարելուն ուղղված միջոցառումների իրականացում և տարեցների մասնակցության ապահովում իրենց կյանքին վերաբերվող որոշումների կայացմանը, ինչպես նաև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց ներգրավմանը:

Ամփոփելով իր խոսքը, Ս. Հարությունյանը նշեց, որ ինչպես երեխաների, այնպես էլ ծերերի յուրաքանչյուր օրը պետք է դարձնել լիարժեք, նրանք պետք է հնարավորության ունենան զբոսնելու, մշակութային կյանքով ապրելու, իրենց կարողություններն իրացնելու և իրենց կարևորությունը հասարակության մեջ զգալու համար:

Աննա Եղիազարյանը շնորհակալություն հայտնեց տիկին Ս. Հարությունյանին, համապարփակ ներկայացման համար, միաժամանակ կարևորեց այն հանգամանքը, որ ընտանիքներում կարողանան պահել կամ հետ վերադարձնել տարեցներին և վերջիններս իրենց զգան որպես լիարժեք անդամ մեր հասարակության մեջ; Այդ պարագայում շատ կարևոր է խնամքը կազմակերպել ընտանիքներում՝ իրենց ազդեցությունը, ներգրավումը հասարակական կյանքում ապահովելով:

Ներկայացրած հարցերի շուրջ Խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց մոտեցումները, առաջարկություններն ու առարկությունները: Քննարկվեցին և հստակեցվին մի շարք կազմակերպչական հարցեր: Հարցի վերաբերյալ ներկայացված հաղորդումը Խորհրդի կողմից ընդունվեց ի գիտություն:

4.Այլ հարցեր

Օրակարգի այս հարցի շրջանակներում.

Արթուր Սարգսյանը բարձրացրեց զբաղվածության պետական գործակալությունում նախատեսվող կրճատումներին, ինպես նաև ՀՀ վարչապետի հաձնարարությամբ աշխատանքային օրենսգրքի մշակման աշխատանքներին առնչվող հարցերը:

Ա. Մարգարյանը զբաղվածության պետական գործակալությունում իրականացվող բարեփոխումներին անդրադառնալով նշեց, որ 14 ծրագրերի փոխարեն այս պահին գործում են չորս ակտիվ ծրագրեր, նախատեսվում է ավելացնել ծախսարդյունավետ ծրագրերի թիվը, այսինքն՝ հնարավորիս քիչ միջոցներով ստեղծվելու են մաքսիմալ արդյունքներ: Հնարավորիս բոլոր ոլորտներում, որտեղ հնարավոր է ծառայությունները պատվիրակել կամ համագործակցել ոլորտում ներգրավված այլ կառույցների հետ, օգտագործվելու է այդ ճանապարհը, ժամանակավոր գործազուրկների կամ աշխատանքը կորցնելու վտանգի առաջ կանգնած քաղաքացիների վերապատրաստման, մասնագիտական ուսուցման ծրագիրը

պատվիրակվելու է կրթության ոլորտ, բայց բյուջետային կարգադրիչը շարունակելու է մնալ Նախարարությունը: Իսկ ինչ վերաբերվում է կրճատումներին, ապա ոչ այնքան կադրային կրճատումներ են սպասվում, որքան կառուցվածքային բարեփոխումներ: Առաջիկայում կառուցվածքային փոխոխության արդյունքում նախատեսվում է ունենալ 11 մոբիլ թիմեր, որոնք կմատուցեն զբաղվածության ծառայություններ:

Ա. Պետրոսյանը հավելեց, որ ֆիզիկական առումով շատ աշխատակիցներ չեն կրճատվելու, ուղղակի կառուցվածքային փոփոխություններ են արվելու, ինչ վերաբերվում է <<Աշխատանքային օրենսգրքի>>-ին՝ հանձնարարական է տրված ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ արդարադատության նախարարություններին համատեղ քննարկել և գտնել մեկ միասնական ձևաչափ: Առաջարկվել է երկու տարբերակ՝ արմատական փոփոխություններ, նոր աշխատանքային օրենսգիրք կամ առկա օրենսգրքի փոփոխություններ: Ներկա պահին այն քննարկման փուլում է, մշակվում է համապատասխան ձևաչափը:

Այլ հարցերի շարքում, խորհրդի տարեկան հաշվետվության մշակման ու ներկայացման ձևաչափի և ընթացակարգի վերաբերյալ հարցի քննարկման մասին «Արազա» ԲՀԿ-ի առաջարկը չքննարկվեց՝ ժամանակի սղության պատճառով:

Նիստի ավարտին որոշում կայացվեց ամփոփել հնչեցված բոլոր առաջարկությունները, օրակարգում ընդգրկված և քննարկված հարցերը լրամշակել առաջարկությունների հիման վրա, կազմել արձանագրություն և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Զ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**